

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 12

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 16.04.2019թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 30 (երեսուն) անդամից 23-ը (քսաներեքը):

Նիստին մասնակցում էին՝

1. **Սերոբյան Երվանդ Սերյոժի** — Ռեկտորի պարտականություններ կատարող
2. **Պետրոսյան Կարինե Ռահիմի** — Գիտական քարտուղար, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Խաչատրյան Վալերի Գրիգորի** — Արհեստակցական կազմակերպության նախագահ
4. **Պողոսյան Բագրատ Ժորայի** – Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի դասախոս, ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ
5. **Մելքոնյան Հովիկ Մենեքերիմի** – Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. **Մկրտչյան Արթուր Վազգենի** — Ռազմական ամբիոնի պետ
7. **Խաչատրյան Թերեզա Արթուրի** -Գրադարան- ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
8. **Հովհաննիսյան Արտաշես Ալեքսանի**– Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ
9. **Հովհաննիսյան Անահիտ Սերյոժայի** — Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի պրոֆեսոր
10. **Հայրապետյան Սերգո Արտուշի** -Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ, հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
11. **Մարդոյան Ռուզաննա Արամայիսի** — Մանկավարժության ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր
12. **Մելիքյան Թամարա Հմայակի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ
13. **Տեր-Աղամյան Շուշանիկ Վոլոդյայի** — Բանասիրական գիտությունների թեկնածու, միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի ասիստենտ
14. **Ղուկասյան Լուսիկ Հենրիկի**— Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, մանկավարժության ամբիոնի դոցենտ
15. **Հակոբյան Լիզա Հելբերդի** — Մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու
16. **Սարգսյան Արմենուհի Հակոբի** — ֆիզմաթ. գիտությունների թեկնածու, դոցենտ, գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

- 17. Մարտիրոսյան Լևոն Սովսեսի** — Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ
- 18. Ավետիսյան Հրանուշ Կարապետի** — Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետ, «Անգլերեն լեզու և գրականություն» 4-րդ կուրսի ուսանողուհի
- 19. Ավագյան Էլմիրա Սոսի** — Մանկավարժության ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ կուրսի ուսանողուհի
- 20. Խաչատրյան Աննա Արմենի** — Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետ, «Սոցիալական աշխատանք», 3-րդ կուրսի ուսանողուհի
- 21. Հովհաննիսյան Լիլիթ Գոռի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանողուհի
- 22. Հարությունյան Ստեփան Մերուժանի** — Ռազմական ամբիոն, «Նախագորակոչային և ֆիզիկական պատրաստություն» 2-րդ կուրսի ուսանող
- 23. Հարությունյան Քաջիկ Հակոբի** — Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետ, «Աշխարհագրություն» 2-րդ կուրսի ուսանող (մագիստրատուրա)

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-2018 ուստարում դեկանների կատարած աշխատանքների հաղորդում

Հաղ.՝ Բ. Պողոսյան
Թ. Մելիքյան,
Ռ. Մարդոյան
Օֆ. Հովհաննիսյան

2. Ռազմական անբիռնի պետի հաշվետվություն

Հաղ.՝ Ռազմական անբիռնի պետ Ա. Մկրտչյան

3. Ուսանողական գիտական ընկերության հաշվետվություն

Հաղ.՝ ՌԻԳԸ նախագահ Ք. Հարությունյան

4. ՇՊՀ-ի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիռնի դոցենտ Արմեն Ներսիսյանի «Քաղաքակրթությունների աշխարհագրության» տեսություն, հայկական քաղաքակրթության աշխարհագրական հիմքերը» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

Հաղ.՝ գիտական քաղաքականության,
որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Մարգարյան

5. «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան Պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգման կանոնակարգի ուժը կորցրած ճանաչելու հարցի մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն Ն. Ավետիսյան

6. Գիտական գործունեության համար տրամադրվող ներբուհական դրամաշնորհի շրջանակում 2017-2019թթ. ֆինանսավորված ներքոնշյալ 2 թեմաների ամփոփիչ հաշվետվությունների ներկայացման մասին.

№	ԱՄԲՈՆՆ	ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ	ԹԵՄԱ
1.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	1.Մերոբյան Երվանդ /դեկ./ 2.Մանուկյան Վարդան 3.Սուլթանյան Խաչատուր 4.Խալիֆյան Լիլիթ /ֆիզ. մագ. 1-ին կուրս/	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկայի խնդիրների լուծման ներկայացումը շարժուն տեսապատկերներով
2.	Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	1.Մարտիրոսյան Լևոն /դեկ./ 2.Մարգարյան Ռուդոլֆ 3.Գրիգորյան Անահիտ 4.Հարությունյան Քաջիկ /աշխարհ. 4-րդ կուրս/	Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա.

Մարգարյան

7. Ընթացիկ հարցեր

7.1 Ընթացիկ ուսումնառող հայցորդ/ ասպիրանտների ուսումնական պլաններով նախատեսված ոչ մասնագիտական որակավորման քննություններին և ստուգարքներին հատկացված կրեդիտների վերաբաշխման վերաբերյալ

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Մարգարյան

7.2 Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ Մելինե Վարդանի Խաչատրյանի ուսումնառության հետազոտական աշխատանքային պլանում կրեդիտների մասնակի վերաբաշխման մասին

Հաղ.՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Մարգարյան

7.3 Նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու վճարի չափի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

7.4 «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի «Արտասահմանյան գրականության պատմություն», «Գրաբար», «Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի» ամբիոնի «Ֆիզիկական կոլոիդային քիմիա», «Ռուսաց լեզվի և գրականության» ամբիոնի «Պրակտիկում» մասնագիտությունների ուսումնական պլաններում ստուգման ձևերի ուղղում

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

1. ԼՍԵՑԻՆ՝

2017-2018 ուստարում դեկանների կատարած աշխատանքների հաղորդում

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ բուհի ֆակուլտետների դեկանների հաշվետվությունները սահմանված ժամանակաշրջանում ներկայացվել և գնահատվել են ֆակուլտետային խորհուրդներում: Հաշվետվությունները էլեկտրոնային նամակի միջոցով ուղարկվել են նաև գիտական խորհրդի անդամներին սահմանված ժամկետում և այս գիտական խորհրդում նրանք սեղմ ներկայացնում են հաղորդում հաշվետվությունից:

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան Բ. Պողոսյանի կողմից ներկայացրած հաղորդում.

Պարոն Պողոսյանը հաղորդման ընթացքում հակիրճ ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետում կատարված աշխատանքները և կանգ առավ որոշման նախագծի վրա, որը ներկայացվեց 10 կետերով՝ առանձին մեկնաբանելով յուրաքանչյուր կետը(կցված են ներկայացված հաղորդմանը):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Կ. Պետրոսյանը, որին հետաքրքրում էր, թե մագիստրոսական թեզի արտաքին գրախոսության համար ֆակուլտետը ինչպիսի առաջարկներ ունի: Հարցին պատասխանեց պարոն Սերոբյանը, նշելով, որ այս շաբաթ նախատեսվում է հարցի առնչությամբ քննարկում անցկացնել կենտրոնի տնօրենների, դեկանների և ամբիոնի վարիչների մասնակցությամբ, որպեսզի որոշում ընդունվի միասնական ձևով բոլոր ամբիոնների մագիստրոսական թեզերը արտաքին գրախոսման ուղարկվել:

Պարոն Սերոբյանը նշեց, որ դա որոշվում է ամբիոնի որոշմամբ, թե ուր են ուղարկվում արտաքին գրախոսման:

Ա. Հովհաննիսյանի կարծիքով թեզերի գրախոսության գործընթացը շատ հստակ պետք է իրականացնել և ոչ թե ամբիոնի վարիչների, այլ համալսարանի ղեկավարության միջնորդությամբ, որպեսզի խոսակցություններ չլինեն, իրենց անբիոնում արդեն նման ավելորդ խոսակցություններ եղել են կապված նրա հետ, որ ամբիոնի վարիչն է արտաքին գրախոսության գործընթացը կազմակերպելու, դրա համար անհրաժեշտ է բուհի պաշտոնական միջամտությունը:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այս շաբաթ նախատեսված է դեկանների, կենտրոնի տնօրենների, ամբիոնների վարիչների հետ հանդիպում և կրողունեն որոշում միասնական ձևով բոլոր ամբիոնների մագիստրական թեզերի արտաքին գրախոսման ուղարկելու ուղղությամբ:

Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան Թ. Մելիքյանի կողմից ներկայացրած հաղորդում.

Տիկին Մելիքյանը նշեց, որ 2016-2017թթ. ուստարվա աշխատանքների մանրամասն հաշվետվությունը իր կողմից ներկայացվել է ֆակուլտետային խորհրդի նիստում և կանգ առավ եղած թերությունների ու բացթողումների վրա՝ շեշտադրելով լինգվաֆոնային լսարանների արդիականացման հարցը, արվեստի ամբիոնի հիմնական մասնաշենքից առանձնացված լինելու ուսանողների ու դասախոսների դժգոհությունը: «Թարգմանչական գործ» մասնագիտությամբ ուսանողների պրակտիկայի հետ կապված, տիկին Մելիքյանը գոհունակությամբ ներկայացրեց, որ ուսանողները իրենց պրակտիկան անցկացրել են համալսարանում՝ կատարելով ամբողջ համալսարանի մագիստրոսական թեզերի վերնագրերի թարգմանությունը:

Տիկին Մելիքյանը խոսքի ավարտին դժգոհություն արտահայտեց համալսարանի ստուգումների գնահատականների մուտքագրման ծրագրի վերաբերյալ, նշելով, որ տրամադրված ժամանակը կարճ է և հատկապես հեռակա համակարգում սովորող ուսանողների համար այն ոչ շահեկան է, քննության մուտքագրումը ուշացնելիս էլ անընդհատ դեկանի կողմից զեկուցագիր է պահանջվում, որից ինքն իր դժգոհությունն է արտահայտում, գտնելով, որ այն ժամանակի ավելորդ կորուստ է:

Պարոն Սերոբյանը չհամաձայնեց տիկին Մելիքյանի հետ՝ շեշտելով, որ ծրագիրը կազմված է և բազայում ստուգումների մուտքագրումը պետք է հստակ նշանակված օրերին ընթանա, նշված ժամանակացույցով գնահատականները պետք է մուտքագրվեն, իսկ եթե դասախոսի պատճառով այն ուշանում է, ապա պետք է նրա կողմից զեկուցագիր ներկայացվի:

Մանկավարժության ֆակուլտետի դեկան Ռ. Մարդոյանի կողմից ներկայացրած հաղորդում.

Տիկին Մարդոյանը նույնպես նշեց, որ 2016-2017թթ. ուստարվա աշխատանքային գործունեության հաշվետվությունը ներկայացրել է ֆակուլտետային խորհրդի նիստում և ներկայացրեց, որ ֆակուլտետում աշխատանքներ են տարվում նոր մասնագիտության՝ «Լոգոպեդիկա»-յի փաթեթի գիտական խորհրդին ներկայացնելու համար, որի հաստատման արդյունքում այն կներկայացվի ԿԳՆ լիցենզիա ստանալու նպատակով:

Տիկին Մարդոյանը նշեց նաև, որ ֆակուլտետում երիտասարդ մասնագետների կարիք կա, նյութատեխնիկական բազան աղքատիկ է, համակարգիչների պակաս ունեն, սպորտ դահլիճում գույքի մի մասը (հատկապես մատերը) հին են: Տիկին Մարդոյանը նշեց, որ իր կողմից առաջարկություն է ներկայացնել բուհի ղեկավարությանը, որպեսզի ֆիզիկական

կուլտուրա և սպորտ-ի բաժնի սպորտսմեն ուսանողները ավարտական աշխատանքի փոխարեն նախկինի նման ավարտական քննություն հանձնեն: Տիկին Մարդոյանը անդրադարձավ նաև մանկավարժության ֆակուլտետի պրակտիկայի հարցերին, նրա կողմից առաջարկվեց նաև, որպեսզի կապը շրջանավարտների հետ միշտ ամուր պահվի պարբերաբար նրանց հետ անցկացնել «բաց դռների օր» միջոցառումներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Պարոն Սերոբյանը տեղեկացրեց, որ ֆիզիկական կուլտուրա և սպորտ-ի բաժնի ուսանողների ավարտական աշխատանքները ավարտական քննության փոխարինելու հարցով իրենք դիմել են ԿԳՆ, սակայն դրական պատասխան չեն ստացել և գտնում է, որ ֆիզկուլտուրայի ինստիտուտի հետ համատեղ այս հարցով միասնական որոշմամբ պետք է հանդես գալ և նորից դիմել նախարարություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2017-2018 ուստարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ «Բնագիտամաթեմատիկական», «Հումանիտար գիտությունների և արվեստի», «Մանկավարժություն» ֆակուլտետների ղեկանների հաղորդումները ընդունել ի գիտություն:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՄԵՑԻՆ՝

Ռազմական անբիռնի պետի հաշվետվություն

Պարոն Մկրտչյանը ներկայացրեց, որ ռազմական անբիռնի գործունեությունը հաշվետու 2017-2018 ուստարում միտված է եղել ուսումնական, գիտական գործունեության շարունակական բարելավմանը: Այնուհետև ներկայացրեց անբիռնի պրոֆեսորադասախոսական կազմը ըստ աշխատանքային ստաժի, թվաքանակը ըստ գիտական աստիճանների, կոչումների եվ գենդերային բաշխվածության, 2017-2018 ուստարում դասախոսական կազմի կողմից դասավանդվող առարկաները պրոֆեսորադասախոսական կազմի ծանրաբեռնվածությունն՝ ըստ ժամաքանակի եվ դրույքաչափի:

Ուսումնամեթոդական գործունեության մասին խոսելիս պարոն Մկրտչյանը ներկայացրեց ՄԿԾ-ները և դրանց ուղղությամբ կատարվող աշխատանքները, նաև անբիռնի կողմից իրականացված աշխատանքները ըստ պրակտիկայի տեսակների և վայրերի: Նա խոսեց նաև թերությունների մասին և մտահոգություն արտահայտեց այն առնչությամբ, որ տարեց-տարի ուսանողների քանակը անբիռնում նվազում է և անելիքներից կարևորագույնն է համարում մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորոշման հետ կապված աշխատանքների իրականացումը, «Զինվորական գործ» մասնագիտության նկատմամբ շրջանավարտների մոտ հետաքրքրություն առաջացնելը: Այս հարցի առնչությամբ պարոն Մկրտչյանը առաջարկեց դպրոցներում իրենց կողմից դասախոսություններ անցկացնել, կազմակերպել միջոցառումներ, ինչպես նաև անբիռնի կողմից կազմակերպվող միջոցառումներում ներգրավել նաև աշակերտներին:

Պարոն Մկրտչյանը հաշվետու ժամանակաշրջանում ուսանողների առաջադիմությունը ներկայացնելիս նշեց, որ ուսումնական նյութերի տրամադրումը (էլեկտրոնային դասախոսությունների փաթեթ) բարձրացրել է ուսանողների կիսամյակային և տարեկան ՄՈԳ-երը, որի հետևանքով առաջադիմության սանդղակը համադրելի է:

Կրթական ծրագրում առկա համաինստիտուտային առարկաների գնահատականը լուրջ ազդեցություն չի կարող ունենալ ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման վրա: Հիմնական խնդիրը ընդհանուր և հատուկ մասնագիտական առարկաների ցածր գնահատականներն են, որոնց

հիմնական պատճառներից մեկը հանդիսանում է բոլոր առարկաների միջանկյալ ստուգումների անցկացումը 3 օրվա ընթացքում:

Վերոգրյալի վերլուծությունների արդյունքում պարոն Մկրտչյանը գտնում է, որ անհրաժեշտ է.

- վերանայել ընդհանուր և մասնագիտական առարկաների ստուգման ձևերը, միջանկյալ և ամփոփիչ ստուգումների հարցատոմսերի կառուցվածքը և բարդության աստիճանը,
- կազմակերպել պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումներ՝ ուղղված դասավանդման մեթոդների և գիտելիքների գնահատման ձևերին, ինչպես նաև վերանայել և բարելավել «ՇՊՀ-ի բակալավրիատի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառության արդյունքների գնահատման և բողոքարկման» ընթացակարգը:

Պարոն Մկրտչյանի կողմից անդրադարձ կատարվեց նաև ուսանողների անհարգելի բացակայություններին և նյութատեխնիկական բազայի անբավարարությանը, հատկապես կուրսային աշխատանքները և մագիստրոսական թեզերը պատշաճ մակարդակով ներկայացնելու համար ամբիոնի գրադարանին անհրաժեշտ է ռազմամասնագիտական և մանկավարժագիտական գրականություն: Այդ նպատակով ամեն տարի ամբիոնի ղեկավարության կողմից ՀՀ ՊՆ համապատասխան վարչություն հայտ է ներկայացվում գրականության, ռազմաուսումնական գույքի հատկացման վերաբերյալ, սակայն հատկացումները չեն բավարարում ուսանողների թվաքանակին, չեն բավարարում նաև համակարգիչներն ու արտապատկերիչով /проектор/ հագեցված լսարանը:

Հաշվետվության ավարտին Պարոն Մկրտչյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի աշխատանքներում կան որոշակի խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Տիկին Մարդոյանին հետաքրքրում էր, թե արդյո՞ք ամբիոնի կարգավիճակը փոփոխության է ենթարկվել և մանկավարժության որակավորումը պահպանվել է, թե՞ ոչ:

Պարոն Մկրտչյանը պատասխանեց, որ չի փոփոխվել և շրջանավարտները ստանում են պահեստային սպայի որակավորում:

Լ. Մարտիրոսյանը արտահայտվեց, որ ՇՊՀ-ի ռազմական ամբիոնը հանրապետությունում էլ ճանաչված է և բարի համբավ ունի և «Պատիվ ունեմ» ծրագիրը կարո՞ղ է ամբիոնն իրականացնել:

Պարոն Մկրտչյանը պատասխանեց, որ նման ծրագրերի իրականացման համար լուրջ նյութատեխնիկական բազա է անհրաժեշտ և իրազեկեց, որ իրենց կողմից առաջարկություն է ներկայացվել ՊՆ նախարարություն, որպեսզի թույլատրեն 102-րդ ռազմաբազան օգտագործել, հատկապես, որ ռուսական կողմը համաձայնել է, սակայն նախարարության կողմից այս առաջարկությունը մերժվել է, պատճառաբանելով, որ այն բազմաթիվ ռիսկերի հետ է կապված: Պարոն Մկրտչյանը նշեց, որ հարցը ընթացքի մեջ է և իրենք այլ բազա փնտրելու և ընտրության աշխատանքներով են հիմա զբաղված:

Ա. Հովհաննիսյանին հետաքրքրում էր այս մասնագիտության մագիստրական թեզերի վերնագրերը:

Պարոն Մկրտչյանը թվեց դրանցից մի քանիսը, օրինակ. «Կին զինծառայողների դերը զինված ուժերում»:

Տիկին Հովհաննիսյանը հավանության արժանացրեց թեզի վերնագիրը և նշեց, որ ինքը միշտ հիացել է զինված ուժերում ծառայող կանանցով և երիտասարդ տարիքում նույնպիսի հավակնություններ է ունեցել:

Ա. Մարգարյանին հետաքրքրում էր, թե ո՞րն է ռազմական ամբիոնի ուսանողների գերազանցության ցուցանիշների բավականաչափ բարձրության հաջողության գրավականը:

Հարցին պատասխանեց Եր. Տոնոյանը, նշելով, որ ռազմական գործում շատ կարևոր է կարգապահությունը, որն էլ ուսանողները այսօր ճիշտ ձևով իրագործում են:

Ա. Սարգսյանին հետաքրքրում էր նաև, թե ինչու հաշվետվությունը 10 չափանիշներով չի ներկայացվել:

Ե. Մերոբյանը պատասխանեց, որ պարոն Մկրտչյանը, կարելի է ասել, նոր է ստանձնել ամբիոնի պետի պարտականությունները, գուցե դրանով, սակայն պետք է նշել, որ լուրջ աշխատանք է տանում ամբիոնի սպայական անձնակազմում կոչումներ տրամադրելու աշխատանքների հետ կապված, արդյունքում արդեն չորս ուսանողներ սպայի կոչում են ստացել և ընդհանրապես ամբիոնի աշխատանքները լուրջ դրական փոփոխություններ են կրել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ռազմական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ հաշվետվությունը գնահատել բավարար, և որոշման նախագիծն ընդունել հիմք՝ արված առաջարկություններով հանդերձ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՄԵՑԻՆ՝

Ուսանողական գիտական ընկերության հաշվետվություն

ՈւԳԸ-ի նախագահ Ք. Հարությունյանի հաշվետվությունը շատ սեղմ էր, ներառում էր միայն 2018թ.-ի Հանրապետական Ուսանողական գիտական նստաշրջանի նյութերը, որոնք էլ նախօրոք տրամադրվել էին գիտական խորհրդի անդամներին:

Ք. Հարությունյանը ներկայացրեց, որ այս տարի իրենց կողմից քիչ աշխատանքներ են կատարվել պայմանավորված բուհի շուրջ իրականացվող դեպքերով, այնուհետև շնորհակալություն հայտնեց գիտական խորհրդի անդամներին, ասելով, որ ինքը արդեն ավարտում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Ա. Սարգսյանը հարց ուղղեց, թե ու՞մ հետ են իրենք այսուհետ աշխատելու Քաջիկի ավարտելուց հետո:

Ք. Հարությունյանը պատասխանեց, որ ինքը շուտով կներկայացնի համապատասխան զեկուցագրով, որ իրեն փոխարինելու է Սուսաննա Խոցանյանը:

Ա. Սարգսյանը հետաքրքրվեց նաև, որ ինչու ներկայացված գիտաժողովի հաշվետվության մեջ վերլուծություններ չկան:

Ք. Հարությունյանը պատասխանեց, որ կախված բուհում տիրող իրավիճակից չկարողացան ավել բան անել:

Կ. Պետրոսյանին հետաքրքրում էր, թե ինչո՞վ է պայմանավորված, որ բուհում տիրող իրավիճակը ուսումնական գործընթացի վրա այդքան չի ազդել և հատկապես ազդել է ՈւԳԸ-ի գործունեության վրա, որ անընդհատ շեշտվում է Ք. հարությունյանի կողմից:

Ք. Հարությունյանը ասաց, որ այդպես է ստացվել և կարող են իր հաշվետվությունը անբավարար գնահատել:

Պարոն Մերոբյանը նշեց, որ ամբողջ հաշվետվությունը ներկայացվում է միայն ուսանողական գիտական նստաշրջանով և ինքը, անկեղծ, չի հասկանում, թե ինչ հաշվետվություն է ներկայացվում ու գտնում է որ ուղղակի պասիվության արդյունք է:

Ք. Հարությունյանն ասաց, որ ինքը ռեկտորին վերջին ամիսներին դիմել է, որ այլևս չի ուզում ղեկավարել ՈւԳԸ-ն:

Տիկին Պետրոսյանը նշեց, որ նման կարգ գոյություն չունի, ավարտելուց երկու ամիս առաջ չեն կարող հրաժարվել աշխատանքից:

Պարոն Մարտիրոսյանը նշեց, որ Ք. Հարությունյանի հաշվետվությունը գուցե, սակայն նրա ամբողջ գործունեությունը բուհում շատ գովելի է:

Պարոն Սերոբյանը նշեց, որ այս պասիվության պատճառները մենք պետք է վերլուծենք, թե ովքե՞ր են թերացել, որակի կենտրո՞նը, բուհի ղեկավարությունը, թե՞ այլ կառույց:

Վ. Խաչատրյանը նշեց, թե ինչու հարցը չի բարձրացվել տարվա ընթացքում:

Ա. Մարգարյանը նշեց, որ աշխատանքներ իրականացնելու համար ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ եղել և այս հարցը մեր բուհում սուղ է:

Պարոն Սերոբյանը նկատեց, որ սա մերկապարանոց հայտարարություն է, քանի որ չի եղել ուսումնական գործընթացի հետ կապված ֆինանսական ներդրում, որ ինքը դեմ լինի և առաջարկեց գնահատել Ք. Հարությունյանի հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուսանողական գիտական ընկերության 2017-2018 ուստարվա աշխատանքային գործունեության վերաբերյալ հաշվետվությունը գնահատել բավարար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 6:

4. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ-ի աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Արմեն Ներսիսյանի «Քաղաքակրթությունների աշխարհագրության» տեսություն, հայկական քաղաքակրթության աշխարհագրական հիմքերը» մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով գրախոսման դրական կարծիքները՝ աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի դոցենտ Արմեն Հովհաննեսի Ներսիսյանի «Քաղաքակրթությունների աշխարհագրության» տեսություն, հայկական քաղաքակրթության աշխարհագրական հիմքերը» մենագրությունը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝

«Գյումրու Մ. Նալբանդյանի անվան Պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգման կանոնակարգի ուժը կորցրած ճանաչելու հարցի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

06.04. 2012թ.-ի ԳՊՄԻ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված «ԳՊՄԻ ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգման ընդհանուր կանոնակարգ»-ը, հիմք՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան կարգը (թիվ 1242, 17 նոյեմբեր 2011թ.) ճանաչել անվավեր, առաջնորդվելով նոր կարգով («Ուսանողների ուսումնառության ընդհատման, հեռացման (ազատման) և վերականգման ընդհանուր կանոնակարգ»-ը նոր հավելվածով՝ հիմք՝ վերոգրյալ կարգը թիվ 198-19, 11.01.2019թ.) մինչև կանոնակարգի վերամշակումը և հաստատումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6. ԼՍԵՑԻՆ՝

Գիտական գործունեության համար տրամադրվող ներքուհական դրամաշնորհի շրջանակում 2017-2019թթ. ֆինանսավորված ներքոնշյալ 2 թեմաների ամփոփիչ հաշվետվությունների ներկայացման մասին.

№	ԱՄԲԻՈՆ	ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐ	ԹԵՄԱ
1.	Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ	1.Սերոբյան Երվանդ /ղեկ./ 2.Մանուկյան Վարդան 3.Սուլթանյան Խաչատուր 4.Խալիֆյան Լիլիթ /ֆիզ. մագ. 1-ին կուրս/	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկայի խնդիրների լուծման ներկայացումը շարժուն տեսապատկերներով
2.	Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիա	1.Մարտիրոսյան Լևոն /ղեկ./ 2.Սարգսյան Ռուդոլֆ 3.Գրիգորյան Անահիտ 4.Հարությունյան Քաջիկ /աշխարհ. 4-րդ կուրս/	Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ) բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը

Մաթեմատիկա, ֆիզիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ ամբիոնից «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկայի խնդիրների լուծման ներկայացումը շարժուն տեսապատկերներով» թեմայի շրջանակներում հաշվետվություն ներկայացրեց Երվանդ Սերոբյանը, իսկ Աշխարհագրություն, կենսաբանություն և քիմիայի ամբիոնից «Հայաստանի Հանրապետության հյուսիսային մարզերի (Շիրակ, Լոռի, Տավուշ)բնական պայմանների ռեկրեացիոն գնահատումը» թեմայի շրջանակում ներկայացրեց Լևոն Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նշելով, որ լրիվությամբ կատարվել են 2017-2019թթ. թվականի դրամաշնորհի շրջանակում նախատեսված աշխատանքները, ընդունել հաշվետվությունը, այն գնահատել դրական:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

7.1 ԼՍԵՑԻՆ՝

Ընթացիկ ուսումնառող հայցորդ/ ասպիրանտների ուսումնական պլաններով նախատեսված ոչ մասնագիտական որակավորման քննություններին և ստուգարքներին հատկացված կրեդիտների վերաբաշխման վերաբերյալ

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Ուսումնահետազոտական աշխատանքների պլաններով նախատեսված օտար լեզվի որակավորման քննությանը և ինֆորմատիկայի որակավորման ստուգարքին հատկացված կրեդիտները, որոնք առ այսօր չեն կուտակվել, փոխանցել և գումարել մասնագիտական որակավորման քննությանը հատկացված կրեդիտներին:

Ազատել այդ կրեդիտների համար կրկնակի վճարում կատարելու պարտականություններից, իսկ մասնագիտական որակավորման քննության պլանավորման և չիրականացման դեպքում վճարումը կատարել կրկնակի՝ հանրագումարային կրեդիտների համար:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 23, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԼՍԵՑԻՆ՝

7.2 Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ Մելինե Վարդանի Խաչատրյանի ուսումնահետազոտական աշխատանքային պլանում կրեդիտների մասնակի վերաբաշխման մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի հայցորդ Մելինե Վարդանի Խաչատրյանի ուսումնահետազոտական աշխատանքային պլանում կատարել կրեդիտների մասնակի վերաբաշխում.

Հումանիտար կրթամասին հատկացված 13 կրեդիտը (390 կրեդիտ-ժամ) դարձնել 9 կրեդիտ (270 կրեդիտ-ժամ)՝ «Համեմատական մանկավարժություն» (2 կրեդիտ) և «Կրթության հոգեբանություն» (2 կրեդիտ) դասընթացները դարձնելով լրացական, որոնց հատկացված կրեդիտները չարտացոլել համընդհանուր կրեդիտներում:

Ընդհանուր պատրաստվածության կրթամասին հատկացված 5 կրեդիտը (150 կրեդիտ-ժամ) դարձնել 4 կրեդիտ (120 կրեդիտ-ժամ)՝ «Համակարգչից օգտվելու հմտություններ» (1 կրեդիտ) դասընթացը դարձնելով լրացական, որին հատկացված կրեդիտը չարտացոլել համընդհանուր կրեդիտներում: Ատեստավորումներին հատկացված 3 կրեդիտը (90 կրեդիտ-ժամ) դարձնել 8 կրեդիտ (240 կրեդիտ-ժամ)՝ «Որակավորման քննություն մասնագիտությունից»-ին հատկացված 2 կրեդիտը դարձնելով 7 կրեդիտ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

7.3 ԼՍԵՑԻՆ՝

Նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու վճարի չափի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Նախորդ տարիների ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտներին 2018-2019 ուստարում ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը թույլատրել վերահանձնելու՝ (հանձնելու) մեկ քննության համար հաստատագրված գումար՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ վճար մուծելու պարագայում:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

7.4 ԼՍԵՑԻՆ՝

«Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի «Արտասահմանյան գրականության պատմություն», «Գրաբար», «Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի» ամբիոնի «Ֆիզիկական կոլոիդային քիմիա», «Ռուսաց լեզվի և գրականության» ամբիոնի «Պրակտիկում» մասնագիտությունների ուսումնական պլաններում ստուգման ձևերի ուղղում

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Հայոց լեզվի և գրականության» ամբիոն

Հայոց լեզու և գրականություն առկա 2-րդ կուրս - «Արտասահմանյան գրականության պատմություն» 32 ժամ 1 ստուգում (պլանում 2 ստուգում)

Հայոց լեզու և գրականություն առկա 2-րդ կուրս - «Գրաբար» 32 ժամ 1 ստուգում (պլանում 2 ստուգում)

«Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի» ամբիոն

Կենսաբանություն 2-րդ կուրս - «Ֆիզիկական կոլոիդային քիմիա» 48 ժամ 1 ստուգում (պլանում 2 ստուգում)

«Ռուսաց լեզվի և գրականության» ամբիոն

Ռուսաց լեզու և գրականություն 2-րդ կուրս - «Պրակտիկում» 48 ժամ 1 ստուգում (պլանում 2 ստուգում)

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

23 անդամ. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ե. Սերոբյան

Գիտական խորհրդի

Վ. Պետրոսյան

քարտուղար՝

Արհմիութենական

Վ. Խաչատրյան

կազմակերպության նախագահ՝

Բնագիտամաթեմատիկական

Բ. Պողոսյան

ֆակուլտետի դեկան՝

Սոցիալական գիտությունների և

Օ. Հովհաննիսյան

իրավունքի ֆակուլտետի դեկան՝

Ռազմական ամբիոնի պետ՝

Ա. Մկրտչյան

Ուսումնագիտական

խորհրդատվական կենտրոն-

Թ. Խաչատրյան

գրադարանի տնօրեն՝

Արտաքին համագործակցության

և հասարակայնության հետ

Հ. Մելքոնյան

կապերի կենտրոնի տնօրեն՝

Տինանսատնտեսական

վերլուծությունների,

ծրագրավորման և

հաշվապահական հաշվառման
 բաժնի վարիչ-գլխավոր
 հաշվապահ՝
 Անձնակազմի կառավարման և
 իրավական ապահովման բաժնի
 պետ
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և
 տեղեկատվական
 տեխնոլոգիաների ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Անգլերեն լեզվի և
 գրականության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Հայոց լեզվի և գրականության
 ամբիոնի դոցենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 պրոֆեսոր՝
 Հումանիտար գիտությունների և
 արվեստի ֆակուլտետի դեկան՝
 Միջմշակութային
 հաղորդակցության և
 զբոսաշրջության ամբիոնի
 ասիստենտ՝
 Մանկավարժության ամբիոնի
 դոցենտ՝
 Պատմության և
 փիլիսոփայության ամբիոնի
 դոցենտ
 Մանկավարժության ամբիոնի
 դոցենտ՝
 Գիտական
 քաղաքականության, որակի
 ապահովման և կառավարման
 կենտրոնի տնօրեն՝
 Աշխարհագրության,
 կենսաբանության և քիմիայի

Ռ. Քալաջյան

Ս. Հովհաննիսյան

Ս. Սարգսյան

Հ. Դրմեյան

Ս. Հովհաննիսյան

Ս. Հայրապետյան

Ռ. Մարդոյան

Թ. Մելիքյան

Շ. Տեր-Ադամյան

Լ. Ղուկասյան

Հ. Խորիկյան

Լ. Հակոբյան

Ս. Սարգսյան

ամբիոնի դոցենտ՝
ՇՊՀ ՈԻԽ նախագահի ԺՊ,
Հումանիտար գիտությունների և
արվեստի ֆակուլտետ,
«Լրագրություն» 4-րդ կուրսի
ուսանողուհի՝
Սոցիալական գիտությունների և
իրավունքի ֆակուլտետ,
«Սոցիալական աշխատանք» 4-
րդ կուրսի ուսանողուհի՝
Անգլերեն լեզու և
գրականություն IV կուրսի
ուսանողուհի՝
Մանկավարժության
ֆակուլտետ, «Մեթոդիկա» 4-րդ
կուրսի ուսանողուհի
Բնագիտամաթեմատիկական
ֆակուլտետ,
«Աշխարհագրություն» 4-րդ
կուրսի ուսանողուհի
ՈւԳԸ նախագահ,
աշխարհագրություն II կուրսի
ուսանող (մագիստրատուրա)՝
Ռազմական ամբիոն,
«Նախագորակոչային և
ֆիզիկական պատրաստություն»
4-րդ կուրսի ուսանող՝
Պատմություն IV կուրսի
ուսանող (հեռակա
բակալավրիատ)

Լ. Մարտիրոսյան
Ջ. Ղազարյան

Ա. Խաչատրյան

Հ. Ավետիսյան

Է. Ավագյան

Լ. Հովհաննիսյան

Ք. Հարությունյան

Մ. Հարությունյան

Ա. Չարչոլյան

